ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/6»

ք. Երևան«» 2025 թ. փետրվարի 14

Միասնական սոցիալական ծառայությունը, իդեմս Ծառայության գլխավոր քարտուղար Ա. Աղաբաբյանի, որըգործումէ Ծառայության կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Պատվիրատու), միկողմից, և«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն, իդեմստնօրեն Գ. Ալեքսանյանի, որըգործումէ Ընկերության կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցինսույնպայմանագիրըհետևյալիմասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայությունների**մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ ապահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու ծառայության համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմացվճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 39707000 (երեսունինը միլիոն յոթ հարյուր յոթհազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝

վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույնպայմանագրովևսույնպայմանագրիհիմանվրակնքված համաձայնագրերովպարտավորություններնամբողջությամբկամմասնակիորենչկատարելուհամարկողմերնազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, ևորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիհիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունըշարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնհիրավունքունիլուծելպայմանագիրը՝այդմասիննախապեստեղյակպահելովմյուսկողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի պայմանագրովստանձնածպարտավորություններիհողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրիցծագածկողմիվճարայինպարտավորությունըչիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝հակընդդեմ պարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումենդատական կարգով:

7.11Սույնպայմանագիրըկազմվածէ____ էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունենհավասարազորիրավաբանականուժ: Սույնպայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածներըհանդիսանումենպայմանագրիանբաժանելիմասը, յուրաքանչյուրկողմինտրվումէ պայմանագրիմեկօրինակ:

7.12ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանհիրավունքը:

7.13Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածը Պատվիրատուն և Կատարողը սահմանում են, որ իրենց միջև կնքվող պայմանագրի (համաձայնագրի) պայմանները կիրառվում են 2025 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ
ք. Երևան Նալբանդյան 13	ք. Երևան Շիրակի օբ. 2-րդ շենք բն 28
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 02236157
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հայէկոնոմ բանկ Շենգավիթի մասնաճյուղ
Հ/Հ 900011556652	Հ/Հ 163018219838
----------	----------
(ստորագրություն)	-- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 14 » « 02 »2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/6» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ամբողջական անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Մատուցման	
								Հասցեն	Ժամկետը*
1	72261160/1	Ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայություններ	**Նախաբան** Նախագծի շահառու կողմ է հանդիսանում Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), որը պետք է իրականացնիՀՀ կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԷԿՏՀ) բաղկացուցիչ ենթահամակարգերի՝«Երեխայի ծննդյան նպաստի նշանակման և վճարման կազմակերպմանենթահամակարգ», «Հաշխատող մայրերին տրամադրվող նպաստի նշանակման և վճարման ենթահամակարգ», «Երեխայի խնամքի նշանակման և վճարման կազմակերպման ենթահամակարգ», «3-րդ և հաջորդ երեխային աջակցության նպաստի նշանակման և վճարման կազմակերպման ենթահամակարգ», «Ուժային մարմիններում կենսաթոշակների և այլ վճարատեսակների նշանակման, վերահաշվարկի և վճարման կազմակերպման ենթահամակարգ», «Պետական պաշտոնյաներին նշանակվող կենսաթոշակների նշանակման, վերահաշվարկի և վճարման կազմակերպման ենթահամակարգ», «ՊԵԿ-ից ստացվող տվյալների ընդունման և դրանք էլեկտրոնային կենսաթոշակ համակարգում կիրարկման ապահովման ենթահամակարգ», «ՔԿԱԳ տեղեկատվական համակարգի՝ ծննդյան և մահվան ակտերի վերաբերյալ, տվյալների	դրամ	39707000	39707000	1	Ք.Երևան, Նալբանդյան 13	Պայմանագրիուժ իմեջմտնելուօրվանիցմինչև՝ «31»դեկտեմբերի 2025թ.ներառյալ*

			ստացման և օգտագործման ենթահամակարգ», «Առցանց դիմումների ընդունման և մշակման ապահովման ենթահամակարգ», «Հայփոստի միջոցով կանխիկ եղանակով վճարման ապահովման համար վճարման ցուցակների ստացման, Հայփոստի՝ վճարման ընթացքի վերահսկողության բարձրացման համար, վճարման ցուցակների էլեկտրոնային տվյալների ձևավորման և տրամադրման ենթահամակարգ», «Աշխատանքային գրքույկներ» համակարգի, (այսուհետ, այս փաստաթղթում «Համակարգ» անվանելով կհասկանանք նշված բոլոր համակարգերն ու ենթահամակարգերը) հետագա արտադրական շահագործումն ու լրամշակումը: «Երեխայի ծննդյան նպաստի նշանակման և վճարման կազմակերպման ենթահամակարգի», «Չաշխատող մայրերին տրամադրվող նպաստի նշանակման և վճարման ենթահամակարգի», «Երեխայի խնամքի նշանակման և վճարման կազմակերպման ենթահամակարգի», «3-րդ և հաջորդ երեխային աջակցության նպաստի նշանակման և վճարման կազմակերպման ենթահամակարգի» միջոցով իրականացվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ Օրենքով սահմանված՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի, չաշխատող անձի մայրության նպաստի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի և ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխային տրվող աջակցության գումարի նշանակումը, մերժումը, իրավունքի դադարեցումը և վերականգնումը, վճարումների դադարեցումը և վերսկսումը: «Առցանց դիմումների ընդունման և մշակման ապահովման ենթահամակարգի» միջոցով https://online.ssa.am հարթակում իրականացվում են առցանց ներկայացված դիմումների գրանցում և համապատասխան համակարգերում ներառում հետագա մշակման նպատակով: Հարթակում ներկայացվում են թաղման նպաստի նշանակման դիմում, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նսպաստի նշանակման դիմում, գյուղական համայքում հաշվառված անձի մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նսպաստի նշանակման դիմում, երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման դիմում, ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխային տրվող աջակցության գումարի						

			նշանակման դիմում, աշխատող կենսաթոշակառուների կենսաթոշակի վերահաշվարկի դիմում, աշխատող կենսաթոշակառուների կենսաթոշակի վճարող կազմակերպության փոփոխության դիմում: Պետական պաշտոնյաներին նշանակվող կենսաթոշակները, ՀՀ ուժային կառույցների բոլոր տեսակի կենսաթոշակները և նպաստները, չաշխատող կանանց մայրության նպաստը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստը, գյուղական բնակավայրում բնակվող ծնողին նշանակվող խնամքի նպաստը, ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխային տրվող աջակցությունը, պատվովճարները և պարգևավճարները (այսուհետ՝ կենսաթոշակներ) նշանակվում և վճարվում են վերոնշյալ ենթահամակարգերի միջոցով: «ՊԵԿ-ից ստացվող տվյալների ընդունման և դրանք էլեկտրոնային կենսաթոշակ համակարգում կիրարկման ապահովման ենթահամակարգը» իրականացնում է ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման համաձայն՝ անձանց աշխատանքային գործունեության, եկամուտների և հաշվարկված հարկերի վերաբերյալ տվյալների ստացում «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից, ստացված տվյալների կիրառման ապահովում Համակարգում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, «ՔԿԱԳ տեղեկատվական համակարգի՝ ծննդյան և մահվան ակտերի վերաբերյալ, տվյալների ստացման և օգտագործման ենթահամակարգը» նախատեսված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման տեղեկատվական համակարգից քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման վերաբերյալ տվյալների ստացման և Համակարգում ստացված տվյալների կիրառման ապահովման համար՝ ապահովելով օրենսդրության պահանջները: «Հայփոստի միջոցով կանխիկ եղանակով վճարման ապահովման համար վճարման ցուցակների ստացման, Հայփոստի՝ վճարման ընթացքի վերահսկողության բարձրացման համար, վճարման ցուցակների էլեկտրոնային տվյալների ձևավորման և տրամադրման						

			ենթահամակարգի» միջոցով կատարվում է «Հայփոստ» ՓԲԸ կողմից վճարման ենթակա ցուցակների բեռնում (ԷԿՏՀ միջոցով ստացված կենսաթոշակի և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման ցուցակներ), վճարման գործընթացի ժամանակ վճարված կենսաթոշակների վճարման օրվա արտացոլում ամենօրյա ռեժիմով, ԷԿՏՀ-ում թաղման նպաստի դիմումի ընթացքավորման ժամանակ կանխիկ վճարման ցուցակում առկա գործի հետագա վճարման արգելափակում, արգելափակված գործերի արգելաբացում եզրակացության հիման վրա, եզրակացության հիման վրա վճարման արգելափակում, ԷԿՏՀ-ում փոստի վճարման ցուցակում արգելափակված գործի արգելափակման ցուցադրում, վճարման ավարտից հետո վճարումների մասին տեղեկատվության բեռնում ԷԿՏՀ: ՀՀ կառավարության 18.08.2017թ. N 882-Ն որոշմանը համապատասխան «Աշխատանքային գրքույկներ» տեղեկատվական համակարգում պահպանվում են անձի նույնականացման համար անհրաժեշտ անձնական տվյալները, գործատուների և ֆիզիկական անձանց կողմից ՄՄԾ տարածքային կենտրոններ ներկայացրած աշխատանքային գրքույկի վերաբերյալ թվայնացված տվյալները և տեսաներածված աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճենները: **Անհրաժեշտությունը** 2025 թվականի Կառավարության ծրագրից բխող մի շարք միջոցառումների իրականացումը, ինչպես նաև շրջանառվող օրենսդրական փոփոխությունների նախագծերի ծրագրային ապահովումը պահանջում է Համակարգում ծավալուն փոփոխությունների իրականացում՝ նոր մոդուլների մշակում, համակարգում առկա մոդուլների լրամշակում, որոշ դեպքերում՝ տրամաբանության փոփոխություն: **Համակարգի օգտվողներն են.** 1) Ծառայությունը և Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները, 2) Պաշտպանության նախարարության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, 3) Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենսաթոշակ						

			նշանակող ստորաբաժանումը, 4) Ներքին գործերի նախարարության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, 5) Ազգային անվտանգության ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, 6) Պետական պահպանության ծառայության կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը: Կենսաթոշակներ նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը սահմանված է օրենքներով և այլ իրավական ակտերով (ցանկը նայել Համակարգի գործառույթներին վերաբերվող ՀՀ օրենսդրություն գլխում): Կենսաթոշակները նշանակվում և վճարվում են հետևյալ ընթացակարգով. 1) շահառուն կամ այլ անձ տարածքային կենտրոնի ընդունարան կամ համապատասխան ուժային կառույցի դիմում ընդունող ստորաբաժանում է ներկայացնում դիմում և համապատասխան փաստաթղթեր կամ Ծառայության առցանց հարթակում լրացնում է դիմում, 2) դիմում ընդունող ստորաբաժանումը դիմումը և փաստաթղթերը հաշվառվում է Համակարգերում, իսկ առցանց դիմումի դեպքում տվյալները ինքնաշխատ եղանակով մուտքագրվում են Համակարգ, 3) նշանակող ստորաբաժանումները ներկայացված փաստաթղթերի և տվյալների հիման վրամուտքագրում են համապատասխան տվյալները, որի հիման վրա համակարգը ինքնաշխատ կայացնում է համապատասխան որոշում, որն արտացոլվում է համակարգում, 4) Ծառայությունը, հիմք ընդունելով մուտքագրված տվյալները (շտեմարանում կատարված փոփոխությունները) սահմանված պարբերականությամբ, ձևավորում է վճարման ցուցակները, 5) եթե կենսաթոշակը վճարվում է անկանխիկ եղանակով, ապա վճարման ցուցակները էլեկտրոնային եղանակով փոխանցվում են բանկերին, 6) եթե կենսաթոշակը վճարվում է կանխիկ եղանակով, ապա վճարման ցուցակները համապատասխան փոխգործելիության հարթակի միջոցով տրամադրվում են «Հայփոստ» ՓԲԸ-ին, 7) վճարման վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվում է Համակարգ:						

			Նպատակը Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Համակարգի հիմնական տարբերակի լրամշակման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման և Համակարգի արտադրական շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման աշխատանքներ: Նոր օրենքների, օրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների ի հայտ գալու պարագայում առկա Համակարգի հիմնական տարբերակում պետք է իրականացնել համապատասխան փոփոխություններ: **Համակարգի ծրագրային ապահովման կիրարկման ծառայության աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները.** 1. Ծրագրային ապահովման կիրարկման ծառայություն մատուցող ընկերությունը (այսուհետ՝ Կատարող) Համակարգի լրամշակման աշխատանքները պետք է իրականացնի համապատասխան համակարգի միջոցով, ըստ Ծառայության կողմից հաշվառված ժամկետների և առաջնահերթությունների: Ընդ որում՝ բոլոր աշխատանքների առաջնահերթությունների համար սահմանվում են հետևյալ ժամկետները՝ - «Անհապաղ»- 1 ժամ - «Հրատապ»-2 օր - «Բարձր»-3 օր - «Միջին»-10 օր - «Ցածր»-15 օր կամ ժամկետը սահմանվում է Ծառայության կողմից: Աշխատանքների ժամկետների և առաջնահերթությունների փոփոխություններ կարող են կատարվել Ծառայության կողմից՝ նոր առաջադրանքի գրանցման պահին կամ աշխատանքների կանոնակարգման անհրաժեշտությունից ելնելով: 2. Կատարողը Համակարգի լրամշակման աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով պետք է հատկացնի ներկայացուցիչ՝ աշխատանքները համակարգող, գրավոր տրամադրելով Ծառայությանը նրա անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը: 3. Աշխատանքները համակարգողը պետք է՝ • Համակարգի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի վերաբերյալ տրամադրի						

			խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով), • իրականացնի Համակարգի շահագործման ընթացքում առաջացած և համակարգի «Հետադարձ կապ» բաժնի(եթե առկա է նման ծրագրային բաժին) միջոցով ուղարկված տեխնիկական խնդիրների լուծում, • իրականացնի այլ աշխատանքներ կապված համակարգի անխափան աշխատանքի ապահովման հետ: 4. Համակարգի տեխնիկական առաջադրանքը պետք է մշտապես լրամշակվի, եթե սպասարկման ընթացքում համակարգում իրականացվել են փոփոխություններ: 5. Ծրագրային ապահովումները կամ փոփոխությունները պետք է նախքան տեղադրումը փորձարկվեն Կատարողի թեստային միջավայրում Կատարողի կողմից, որից հետո տեղայնացվեն Պատվիրատուի թեստային միջավայրում: Պատվիրատուի կողմից վերջնական թեստավորումից հետո ծրագրային ապահովման թեստավրված մասը կտեղափոխվի Պատվիրատուի թողարկման սերվեր (production server): 6. Համակարգի կամ փոփոխությունների ընդունման թեստավորման և շահագործման ընթացքում բացահայտված թերությունները պետք է գրանցվեն Կատարողի՝ առաջադրանքների, սխալների, բարելավումների առաջադրման և դրանց կատարման ընթացքին հետևելու համար նախատեսված համակարգում (օրինակ՝ Jira, RedMine, OpenProject կամ նմանատիպ այլ համակարգ), որին մուտք պետք է տրամադրվի ՀՀ Միասնական սոցիալական ծառայության համապատասխան աշխատակիցներին: Յուրաքանչյուր այդպիսի գրառում իրենից ներկայացնելու է էլեկտրոնային թերթիկ (ticket), որը կներառի խնդրի/թերության մանրամասն նկարագրությունը, վերարտադրման քայլերը և այլ լրացուցիչ տեղեկատվություն (օր.՝ լուծման առաջարկ, հղում փաստաթղթին): 7. Համակարգի թեստավորման համար պետք է առնվազն կիրառվեն հետևայլ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ թեստավորման տեսակները՝ Կոդիթեստավորում (Code testing), Համակարգիմիավորիթեստ (Unit testing), Ինտեգրմանթեստ (Integration testing), Հետանցմանթեստ (Regression testing), Արտադրողականությանթեստ (Performance testing), Բեռնավորմանթեստ (Load testing),						

			Համատեղելիությանթեստ (Compatibility testing), Անվտանգությանթեստ (Security testing), Տվյալներիարտահոսքիթեստավորում(Data leak testing), Խոցելիությանթեստավորում (Vulnerability testing), Օգտագործողիընդունմանթեստ (User Acceptance Testing (UAT)): 8. Կատարողը համակարգի նախագծման, մշակման, զարգացման, փոփոխությունների և հավելումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնի համատեղելիությունը ներկայումս կիրառվող տեղեկատվական համակարգերի հետ: 9. Համակարգը պետք է կարողանա ապահովել 24/7 ռեժիմով աշխատանք: Համակարգի սարքին վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 99.3 (+,- 0.7%) տոկոսից ավել: Սա նշանակում է, որ համակարգի՝ տարեկան անսարք վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 2 (+,- 2 օր) օրից պակաս: Սպասարկման և թարմացումների նպատակով համակարգի անջատումները պետք է լինեն պլանային և անպայմանորեն համաձայնեցվեն Միասնական սոցիալական ծառայության համապատասխան աշխատակիցների հետ: Համակարգի վթարային անջատումները չեն կարող գերազանցել 4 (չորս) ժամը, եթե պատճառը անսարք սարքավորման փոխանակման նպատակով նոր սարքավորման բացակայությունը չէ: Պատվիրատուի պահանջի դեպքում Կատարողը պարտավոր է ստորագրել սպասարկման գործընթացի մասին համաձայնագիր (SLA – Service Level Agreement) 10. Համաժամանակյա ակտիվ օգտվողների նվազագույնը շեմը սահմանվում է մինչև 300 օգտվող: Համաժամանակյա հարցումների քանակը, որոնք պետք մշակվեն համակարգում նախագծված վեբ սերվիսների միջոցով և չազդեն համակարգի աշխատունակության վրա սահմանվում է վայրկյանում 70 ստացված և պատասխանված հարցում: 11. Առավելագույն ծանրաբեռնվածության պայմաններում համակարգի 95% ֆունկցիոնալության արձագանքման ժամանակահատվածը պետք է կազմի առավելագույնը 5 վայրկյան: 12. Համակարգի կոնֆիգուրացիոն փոփոխությունները և թարմացումները պետք է հեշտորեն իրականացվեն և որևէ ազդեցություն չունենան համակարգի աշխատանքի վրա:						

			13. Համակարգը պետք է լինի ընդլայնվող ֆունկցիոնալությամբ, վերազինված լինի աշխատունակության դինամիկ ընդլայնմամբ (dynamic scalability, load balancing)՝ Պատվիրատուի սերվերային ռեսուրսների օպտիմալ օգտագործման նպատակով: 14. Տվյալների մակարդակում պետք է կատարվեն միջոցառումներ անձնական տվյալների անվտանգությունը տվյալների շտեմարանների անվտանգ կառուցվածքի միջոցով ապահովելու համար: 15. Համակարգի տեղեկատվական անվտանգության ապահովման կանոնները պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության «Կիբեռանվտանգության բազային պահանջները հաստատելու մասին» 424-ԼԳ որոշմամբ սահմանված հիմնարար սկզբունքներին: 16. Համակարգը պետք է իրականացնի տեղեկատվության և գործողությունների գրանցում (activity logging, error logging): Համակարգի ծրագրային ապահովումը տվյալների պահոցների հետ պետք է աշխատի միայն միջանկյալ վերահսկիչ սերվերի (database access proxy server) միջոցով՝ տվյալների շտեմարանի հետ կատարվող բոլոր գործընթացները լոգավորելու համար: Գրանցումը, ի լրումն այլ տեղեկատվության, պետք է ներառի գործողության ժամը, IP հասցեն, կատարողի ինքնությունը և այլն: 17. Օգտվողի միջերեսը պետք է լինի հարմար օգտագործման և դյուրին յուրացման համար: Կիրառվող տերմինները պետք է լինեն հայերեն, հասկանալի և մատչելի վերջնական օգտվողի համար, ապահովի օգտվողի հեշտ և հարմար տեղաշարժը տարբեր մոդուլների միջև, պետք է ունենա որոնման արդյունավետ մեխանիզմ: 18. Կատարողի տրամադրած ծրագրային ապահովումները և մատուցված ծառայությունները պետք է զերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ թերություններից, որոնք կարող են հանգեցնել համակարգի և/կամ վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը: Թերության բացահայտման դեպքում Պատվիրատուն 6-րդ կետում նշված՝ Կատարողի հատուկ համակարգում՝ էլեկտրոնային թերթիկի (ticket) միջոցով պետք է ծանուցի Կատարողին այդ մասին՝ ներկայացնելով թերության նկարագրությունը՝						

			առկա ողջ փաստարկներով, որը Կատարողը առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ուսումնասիրի և էլեկտրոնային թերթիկի (ticket) միջոցով ներկայացնի հիմնավորված առաջարկ թերության վերացման եղանակի և իրականացման ողջամիտ ժամկետի վերաբերյալ: 19. Սպասարկման ընթացքում համակարգի նախագծման, ծրագրավորման կամ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների հետ կապված որևէ թերության բացահայտման դեպքում Կատարողը պետք է Պատվիրատուի հետ խորհրդակցի և բացառապես իր ֆինանսական միջոցներով վերացնի խնդիրը: 20. Կատարողը պատասխանատու չի լինի երևան եկած վնասի կամ թերության վերացման համար հետևյալ դեպքում՝ Պատվիրատուի կողմից համակարգի ոչ պատշաճ գործարկում կամ պահպանում, ենթակառուցվածքի բնական մաշվածություն, Պատվիրատուի կամ երրորդ կողմի միջոցով համակարգում փոփոխություններ անելու դեպքում, որը չի հաստատվել Կատարողի կողմից: 21. Կատարողը սերտ համագործակցելու է Պատվիրատուի հետ և պարտավոր է աջակցել Պատվիրատուին՝ ստուգելու մատուցվող ծառայության ընթացքը և որակը: **Աշխատանքների ներկայացում** Ծառայության համապատասխան վարչությունը ի հայտ եկած խնդիրների, Համակարգում չնախատեսված անհրաժեշտ փոփոխությունների և առկա Համակարգի հիմնական տարբերակի լրամշակման համար նախատեսվող աշխատանքները հաշվառում է համապատասխան համակարգում, որը հնարավորություն է ընձեռում ինքնաշխատ եղանակով այն փոխանցել (ուղարկել) Կատարողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով՝ հաշվառված աշխատանքի կատարումն ապահովելու նպատակով: **Աշխատանքների իրականացում** **Իրականացվող աշխատանքների շրջանակում Կատարողը պետք է ապահովի.** 1. Համապատասխան իրավական ակտի ընդունման դեպքում՝ օրենսդրական փոփոխությունների հիման վրա, Համակարգի ծրագրային ապահովման փոփոխությունների						

			կատարում, մասնավորապես՝ 1.1. Կենսաթոշակների և պետական նպաստների վճարման անկանխիկ համակարգին անցում կատարելու շրջանակում՝ ծրագրային սահմանափակումների ավելացում կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկման, վճարման վերսկսման, իրավունքի վերականգնման և այլ դիմումների մշակման ժամանակ վճարման կանխիկ եղանակի ընտրության համար՝ պայմանավորված շահառուի (խնամակալի) տարիքով, հաշմանդամության խմբով, բնակավայրով, դիմում ներկայացնելու ժամանակահատվածով, 1.2. «Հայփոստ» ՓԲԸ-ին վճարման էլեկտրոնային ցուցակների առցանց տրամադրման ապահովում և վճարումների վերաբերյալ ստացված տեղեկատվության ինքնաշխատ կիրառում Համակարգում, 1.3. Համակարգում առկա էլեկտրոնային գործերի չափերի որոշման (տեղեկատվության ստուգման) գործիքի ստեղծում, չափի ձևավորման համար հիմք հանդիսացող պարամետրերի պահպանում և ցուցադրում: **2. Համակարգի անխափան աշխատանք՝ հետևյալ գործառույթներով.** 2.1. Համակարգի և նրա միջոցով մատուցվող էլեկտրոնային ծառայությունների (սերվիսների) անխափան շահագործման ապահովում, համաձայն օրենսդրության, 2.2. տարածքային կենտրոնի ընդունարան կամ համապատասխան ուժային կառույցի դիմում ընդունող ստորաբաժանում ներկայացված և Համակարգում հաշվառված դիմումների և կից փաստաթղերի հիման վրա նշանակող ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության մուտքագրում և հաշվառում Համակարգում, 2.3. Առցանց դիմումի հիման վրա ներկայացված տվյալների ստացում, մշակում, մուտքագրում և հաշվառում Համակարգում, առցանց դիմումի ընթացքի հետ կապված էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկում դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեին, 2.4. Ներկայացված փաստաթղթերի տեսաներածում և հաշվառում Համակարգում, 2.5. Մուտքագրված տեղեկատվության և տեսաներածված փաստաթղթերի հիման վրա էլեկտրոնային գործի ստեղծում, տեսաներածված						

			փաստաթղթերի կցում էլեկտրոնային գործին, 2.6. Մուտքագրված տեղեկատվության հիման վրա քաղաքացու իրավունքի, նշանակման ժամկետների, չափի, վճարման ենթակա գումարի, հետ վերադարձման ենթակա գումարի ինքնաշխատ որոշում, 2.7. Կենսաթոշակների և պետական նպաստների և այլ վճարատեսակների նշանակում, վերահաշվարկ, իրավունքի դադարեցում և վերականգնում, վճարումների դադարեցում և վերսկսում՝ հաշվի առնելով օրենսդրության պահանջները, 2.8. Մուտքագրված տեղեկատվության հիման վրա կենսաթոշակի իրավունք տվող և կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող աշխատանքային ստաժի հաշվարկ՝ հաշվի առնելով օրենսդրությամբ սահմանված՝ աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնները, պայմաններն ու կարգը (տարբեր տարիներին գործած օրենսդրության հաշվառմամբ), 2.9. Վերահսկողական համապատասխան իրավասություններ ունեցող պատասխանատուների կողմից գործի հետ կատարված յուրաքանչյուր գործարքի կապակցությամբ իրականացված որոշումների հաստատում կամ մերժում, 2.10. Վճարումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակություն վճարող կազմակերպությունների հետ (բանկեր, Հայփոստ), այդ տեղեկատվության ամփոփում և մուտքագրում Համակարգ, կատարված վճարումների և փոխադարձ ակտերի հաշվառում, գրանցում և պահպանում Համակարգում, 2.11. Հերթական (պարբերական և միանվագ) վճարման ցուցակների, անհրաժեշտ միջոցների հայտ-պահանջագրերի ձևավորում (չվճարված գումարների հաշվարկում), այդ թվում՝ Հինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամների վճարման ցուցակների ձևավորում՝ համաձայն օրենսդրության, 2.12. ԴԱՀԿ ծառայությունից ստացված որոշումների հիման վրա պահումների իրականացում, պահված գումարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ԴԱՀԿ-ին, 2.13. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 713-Ն որոշման համաձայն՝ ՀՀ բնակչության և նրանց հաշվառման հասցեների մասին տվյալների ստացում բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական						

			համակարգից, ստացված տվյալների կիրառման ապահովում Համակարգում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, 2.14. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման վերաբերյալ տվյալների ստացում քաղաքացիական կացության ակտերի գրանցման տեղեկատվական համակարգից, ստացված տվյալների կիրառման ապահովում Համակարգում՝ ապահովելով օրենսդրության պահանջները, 2.15. ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման համաձայն՝ անձանց աշխատանքային գործունեության, եկամուտների և հաշվարկված հարկերի վերաբերյալ տվյալների ստացում «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից, ստացված տվյալների կիրառման ապահովում Համակարգում և «Աշխատանքային գրքույկներ» տեղեկատվական համակարգում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, 2.16. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպություններում (մանկատուն, ծերանոց) բնակվող անձանց վերաբերյալ տվյալների ստացում համապատասխան տեղեկատվական համակարգից, ստացված տվյալների կիրառման ապահովում Համակարգում՝ ապահովելով օրենսդրության պահանջները, 2.17. Անձանց հաշմանդամության մասին տվյալների ստացում «Փյունիկ» տեղեկատվական համակարգից, ստացված տվյալների կիրառման ապահովում Համակարգում՝ ապահովելով օրենսդրության պահանջները, 2.18. Համակարգի տվյալների շտեմարանների և ծրագրային ֆայլերի պահուստային պատճենների ստեղծում (ամբողջական և օրական կտրվածքով), տվյալների շտեմարանների աշխատանքի մոնիթորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից, 2.19. Համակարգից տվյալների (տեղեկատվության), հաշվետվությունների, տեղեկանքների կամ վիճակագրական տվյալների ստացում (արտածում), մշակում և տրամադրում Պատվիրատուին,						

			2.20. Համակարգից ինքնաշխատ եղանակով (սերվիսի միջոցով կամ փոխհամաձայնեցված այլ տարբերակով) տեղեկատվության տրամադրում, 2.21. Պատվիրատուի պահանջով՝ Համակարգի միջոցով կատարված գործողությունների (գործառնությունների) վերծանումների տրամադրում Պատվիրատուին, 2.22. Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգի անխափան շահագործման ապահովում, կառավարման ենթահամակարգի լրամշակում՝ հաշվի առնելով նպաստ նշանակելու ընթացակարգերի փոփոխության (դերերի և լիազորությունների վերաբաշխման) հետ, 2.23. Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող՝ անհետաձգելի շտկում պահանջող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում շուրջօրյա ռեժիմով (7 օր/24 ժամ), այդ թվում՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին (ծրագրային թերությունը և բացթողումը անհետաձգելի է համարում Պատվիրատուն): 2.24. Համակարգի ծրագրային ապահովության մեջ փոփոխությունների կատարում և շտեմարանի լրամշակում: **Համակարգի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունները և բացթողումները շտկելու, օրենսդրական փոփոխությունների հիման վրա Համակարգի ծրագրային ապահովության մեջ փոփոխությունների կատարելու (լրամշակելու) աշխատանքներն իրականացվում են հետևյալ ընթացակարգով.** • Պատվիրատուն համապատասխան համակարգում հաշվառում է առաջադրանքը՝ նշելով առաջնահերթությունը, • Կատարողը, ըստ անհրաժեշտության, առաջադրանքը քննարկում է Պատվիրատուի հետ՝ գրավոր կամ բանավոր կարգով պարզաբանումներ ստանալով առաջադրանքի բովանդակության վերաբերյալ, • Առաջադրանքի բովանդակության հստակեցումից հետո Պատվիրատուն և Կատարողը փոխհամաձայնեցնում են աշխատանքի ավարտի ժամկետները՝ հաշվի առնելով առաջադրանքի առաջնահերթությունը, և Պատվիրատուն համապատասխան համակարգում հաշվառում է աշխատանքի ավարտի կատարման ժամկետները, • Ծրագրային փոփոխությունները առաջնահերթ թեստավորում է Կատարողը, որից հետո տեղադրվում են						

			թեստային միջավայրում՝ Պատվիրատուի կողմից թեստավորման նպատակով, • Պատվիրատուի համաձայնության դեպքում ծրագրային փոփոխությունները տեղադրվում է հիմնական միջավայրում, • Կատարողը կազմակերպում է Համակարգի շահագործող մասնագետների ուսուցում՝ ըստ պահանջի և անհրաժեշտության, • Կատարողը ապահովում է Համակարգի օգտվողի ձեռնարկի և Համակարգի տեխնիկական այլ փաստաթղթերի թարմացում (լրամշակում)՝ համաձայն կատարված փոփոխությունների: Կատարողը պարտավոր է ապահովել տեղեկատվության պահպանման անվտանգությունն ու աշխատանքների իրականացման շրջանակներում իրեն հայտնի դարձած տվյալների գաղտնիությունը: Յուրաքանչյուր ամսվա ընթացքում Կատարողի կողմից ներկայացվում է հաշվետվություն՝ կատարված շտեմարանների փոփոխությունների արդյունքների վերաբերյալ: **Իրականացված աշխատանքների ընդունում** Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ Կատարողը Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն՝ ուղեկցող նամակով, և տվյալ ամսվա ընթացքում ստացված արդյունքներով (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին կրիչով), իսկ առնչվող փաստաթղթերը՝ թղթային տարբերակներով: **Համակարգի գործառույթներին վերաբերվող ՀՀ օրենսդրություն** **I. ՀՀ օրենքներ** 1. ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին» (Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին), 2. ՀՀ օրենքը «Պետական նպաստների մասին» (Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին), 3. ՀՀ օրենքը «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» (Ընդունված է 2014 թվականի փետրվարի 4-ին),						

			4. ՀՀ օրենքը «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» (Ընդունված է 2010 թվականի հոկտեմբերի 27-ին), 5. ՀՀ օրենքը «Կուտակային կենսաթոշակների մասին» (Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին), 6. ՀՀ սահմանադրական օրենքը «Սահմանադրական դատարանի մասին» (Ընդունված է 2018 թվականի հունվարի 17-ին), 7. «Քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ին ՀՕ2- 5-Ն օրենք, 56 հոդված, 8. «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն օրենք, հոդված 68: **II. ՀՀ կառավարության որոշումներ** 1. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշում, 2. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրվող ամենամսյա պարգևավճարի չափերը՝ ըստ պարգևավճար ստանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշում, 3. ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 895-Ն որոշում, 4. ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1024-Ն որոշում, 5. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշում, 6. ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 26-ի «Ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, ինչպես նաև ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ կամ						

			կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացող անձի մահվան դեպքում թաղման նպաստը նշանակելու և վճարելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» թիվ 635-Ն որոշում, 7. ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 1179-Ն որոշում, 8. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը նշանակելու և վճարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1566-Ն որոշում, 9. ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 2169-Լ որոշում, 10. «Քննչական կոմիտեի ծառայողի կենսաթոշակը նշանակելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 30-Ն որոշում, 11. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» N 670-Ն որոշում, 12. ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված կամ մահացած կամ անհայտ կորած կամ հաշմանդամ ճանաչված՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող անձանց մասին» N 580-Ն որոշումը, 13. ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու, աշխատանքային գրքույկները Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ներկայացնելու և աշխատողներին հանձնելու կարգը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 876-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 882-Ն որոշում, 14. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության						

			ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում ստացած կամ մարտական խաչ շքանշանով պարգեվատրված անձի ընտանիքին ամենամսյա պարգևավճարի նշանակման և վճարման կարգը հաստատելու մասին» N 302-Ն որոշումը, 15. ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամսյա պատվովճարի չափը սահմանելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը գումար հատկացնելու մասին» N 444-Ն որոշումը, 16. ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և թաղման նպաստի չափը սահմանելու մասին» N 1734-Ն որոշում, 17. ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների և թաղման նպաստի չափերը սահմանելու մասին» N 1489-Ն որոշում, 18. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 713-Ն որոշում: 19. ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու կարգը հաստատելու մասին» N 1081-Ն որոշում: **III. Համատեղ հրաման, հրաման** 1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից արխիվային փաստաթուղթ ստանալու համար						

			հարցում կատարելու և «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հարցմանը պատասխանելու կարգը հաստատելու մասին» համատեղ հրամանը (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 09.02.2017թ. թիվ 16 -Ա հրաման): 2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի նոյեմբերի 28-ի «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու և վճարելու, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու, խնամքի նպաստ վճարելը վերսկսելու և չվճարված խնամքի նպաստը վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 143-Ն հրաման: **IV. Միջազգային համաձայնագրեր** 1. 1992 թվականի մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին», 2. 1992 թվականի մայիսի 15-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին», 3. 1993 թվականի դեկտեմբերի 24-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների աշխատակիցների կենսաթոշակային ապահովման և պետական ապահովագրության կարգի մասին», 4. «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության և Ռուսաստանի Դաշնության սոցիալական պաշտպանության նախարարության միջև կնքված՝ կենսաթոշակային ապահովության բնագավառում համագործակցության մասին» վարչական համաձայնագիր: **Տեխնիկական տվյալներ** Գնման առարկան վերաբերվում է արդեն իսկ առկա գործող համակարգերին, ինչպես նաև նոր գործիքակազմի ստեղծմանը և ներդրմանը՝ կապված օրենսդրական ակտերի փոփոխության կամ նոր իրավական ակտերի ընդունման հետ:						

			Գործող Համակարգի շահագործման պարամետրեր են՝ • Օպերացիոն համակարգ – openSUSE Leap 42.2, openSUSE Leap 42.3, ESXi 5.5 FreeBSD 11.1 • Տեղեկատվական շտեմարանի կառավարման համակարգ - Oracle11g Release 2, PostgreSQL 9.6.3 • Ծրագրավորման լեզուն - PHP 7.0.7 , PHP 7.1.7 և PHP-ի հետևյալ հարակից փաթեթները՝ bz2, PDO, PDO_OCI, mbstring, PCRE, SPL, Reflection, DOM, Mcrypt, SOAP,GD, Iconv, yii 1.1, yii 2.0, Jdk 7u3, Visual Basic, .net framework 4.6 • Մեթոդաբանություն - Client/ Server • Համացանց սերվեր (web server) - Apache 2.4, Tomcat 7 • Տվյալների փոխանցման "protocol" (Data transfer protocol) – HTTP Օպերացիոն համակարգի և բազայի ադմինիստրատիվ կառավարումը պետք է իրականացվի Կատարողի կողմից: Անհրաժեշտությունից ելնելով Պատվիրատուի պահանջով կարող են փոխվել վերը նշված տեխնիկական պարամետրերի տարբերակները:						
Այլ պայմաններ			Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածը Ծառայությունը և Կատարողը սահմանում են, որ իրենց միջև կնքվող պայմանագրի (համաձայնագրի) պայմանները կիրառվում են 2025 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
ք. Երևան Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ **900011556652**

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ
ք. Երևան Շիրակի օր. 2-րդ շենք բն 28
ՀՎՀՀ 02236157
Հայէկոնոմբանկ Շենգավիթի մասնաճյուղ
Հ/Հ **163018219838**

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«14» «02» 2025թ. կնքված
«ՄՍԾ ՄԱԾՁԲ-25/6» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության														
Չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	72261160/1	Ծրագրայինապահովմանսպասարկմանխսրհրդատվականծառայություններ	-	9,926,750	9,926,750	19,853,500	19,853,500	19,853,500	29,780,250	29,780,250	29,780,250	39707000	39707000	39707000	39707000

/Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
ք. Երևան Նալբանդյան 13
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ **900011556652**

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ
ք. Երևան Շիրակի օք. 2-րդ շենք բն 28
ՀՎՀՀ 02236157
Հայէկոնոմ բանկ Շենգավիթի մասնաճյուղ
Հ/Հ **163018219838**

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«14» 02 2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/6» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցվածծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 14 » 02 2025թ. կնքված
«ՄՄԾ ՄԱԾՁԲ-25/6»ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն